ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

**No 2634-Ա/2** **«12» նոյեմբերի 2025 թ.**

## 2026 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ, ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿԻ ԱՂՅՈՒՍԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի 9-րդ հոդվածի «ա», «գ» և «ժ.1» կետերի՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել՝ 2026 թվականին անցկացվող «Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի»՝

1) կանոնակարգը՝ համաձայն հավելված № 1-ի,

2) մրցումների անցկացման ծրագիրը և մասնակցության կարգը՝ համաձայն հավելված № 2-ի,

3) միավորային հաշվարկի աղյուսակը՝ համաձայն հավելված № 3-ի,

4) մասնակցության հայտի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված № 4-ի:

**ՆԱԽԱՐԱՐ՝** **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

X

*Հավելված № 1*

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի*

*2025 թվականի -------------------------- -------- -ի*

*№ -------------- -Ա/2 հրամանի*

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

**2026 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ**

## I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 2026 թվականին անցկացվող նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի (այսուհետ՝ Ռազմամարզական խաղեր) նպատակներն են՝

1) նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորումը,

2) հայրենիքի պաշտպանությանը պատրաստ և Հայաստանի Հանրապետության ազգային բանակում ծառայելու համար ֆիզիկապես կոփված երիտասարդներ դաստիարակելը:

2. Ռազմամարզական խաղերի խնդիրներն են՝

1) ավագ տարիքի դպրոցականների ֆիզիկական պատրաստականության մշտադիտարկումը,

2) դպրոցականների և երիտասարդության շրջանում իրականացվող ռազմահայրենասիրական դաստիարակության և զանգվածային մարզական աշխատանքների հետագա բարելավումը:

## II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Ռազմամարզական խաղերի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն): Ռազմամարզական խաղերի անցկացմանն աջակցում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը:

4. Ռազմամարզական խաղերն անցկացվում են 4 փուլով: Խաղերի կազմակերպման ու անցկացման պատասխանատվությունն ըստ փուլերի կրում են՝

1) 1-ին՝ ներդպրոցական փուլում՝ հանրակրթական դպրոցները,

2) 2-րդ՝ համայնքային և Երևանի վարչական շրջանների փուլում՝ համայնքապետարանները և Երևան քաղաքի վարչական շրջանների աշխատակազմերը:

3) 3-րդ՝ մարզային և Երևանի քաղաքային փուլում՝ Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերը և Երևանի քաղաքապետարանը,

4) 4-րդ՝ եզրափակիչ փուլում Նախարարությունը և Նախարարության կողմից հաստատված մրցավարական հանձնաժողովը:

## III. ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

5. Ռազմամարզական խաղերն անցկացվում են 2026 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին՝

1) 1-ին փուլ – հանրակրթական դպրոցներում, մինչև սեպտեմբերի 18-ը,

2) 2-րդ փուլ - Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում և Երևան քաղաքի վարչական շրջաններում, սեպտեմբերի 22-ից 30-ը,

3) 3-րդ փուլ - Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում, հոկտեմբերի 1-10-ը,

4) 4-րդ փուլ - հոկտեմբերի 15-18-ը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության N զորամասում:

## IV. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

6. Ռազմամարզական խաղերին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի) 10-12-րդ դասարանների սովորողներից ձևավորված հավաքական թիմերը:

7. Թիմի կազմը՝ 9 մարզիկ (տղա) և 1 մարզիչ-ներկայացուցիչ, ընդամենը՝ 10 մարդ:

8. Ըստ փուլերի մասնակցում են՝

1) 1-ին՝ ներդպրոցական փուլին՝ 10-12-րդ դասարանների աշակերտները՝ դպրոցի հավաքական թիմը ձևավորելու համար,

2) 2-րդ՝ համայնքային փուլին - դպրոցների հավաքական թիմերը,

3) 3-րդ՝ մարզային և Երևան քաղաքի փուլին - 2-րդ փուլում 1-ին տեղերը գրաված դպրոցների հավաքական թիմերը, բացառությամբ Վայոց ձորի մարզի, որտեղ կարող են մասնակցել 2-րդ փուլում 1-ին և 2-րդ տեղերը գրաված դպրոցների հավաքական թիմերը:

4) 4-րդ՝ եզրափակիչ փուլին՝ 3-րդ փուլում 1-ին տեղը գրաված հանրակրթական դպրոցների հավաքական թիմերը:

9. Միջոցառման համայնքային փուլն անցկացվում է Հայաստանի Հանրապետության մարզերի 39 համայնքներում (տարածաշրջաններում) և Երևան քաղաքի 10 վարչական շրջաններում (մասնակից դարձնելով բոլոր 12 վարչական շրջաններին).

1) Արագածոտնի մարզ՝ ք. Աշտարակ, ք. Ապարան, ք. Թալին,

2) Արարատի մարզ՝ ք. Արտաշատ, ք. Մասիս, ք. Արարատ,

3) Արմավիրի մարզ՝ ք. Արմավիր, ք. Մեծամոր, ք. Էջմիածին,

4) Գեղարքունիքի մարզ՝ ք. Գավառ, ք. Ճամբարակ, ք. Մարտունի, ք. Սևան, ք. Վարդենիս,

5) Լոռու մարզ՝ ք. Վանաձոր, ք. Ալավերդի, ք. Ստեփանավան, ք. Սպիտակ, ք. Տաշիր,

6) Կոտայքի մարզ՝ ք. Հրազդան, ք. Աբովյան, ք. Չարենցավան, ք. Եղվարդ,

7) Շիրակի մարզ՝ ք. Գյումրի, ք. Արթիկ, ք. Մարալիկ, գ. Ամասիա, գ. Ախուրյան,

8) Սյունիքի մարզ՝ ք. Կապան, ք. Գորիս, ք. Սիսիան, ք. Քաջարան, ք. Մեղրի,

9) Վայոց ձորի մարզ՝ ք. Եղեգնաձոր, ք. Վայք,

10) Տավուշի մարզ՝ ք. Իջևան, ք. Դիլիջան, ք. Նոյեմբերյան, ք. Բերդ,

11) Երևան քաղաքի 10 վարչական շրջաններում՝ 1. Կենտրոն, 2. Մալաթիա-Սեբաստիա, 3. Նոր Նորք, 4. Շենգավիթ, 5. Արաբկիր, 6. Քանաքեռ-Զեյթուն, 7. Աջափնյակ, 8. Էրեբունի-Նուբարաշեն, 9. Դավթաշեն, 10. Ավան և Նորք Մարաշ:

10. Վերոնշյալ տարածաշրջաններն ընդգրկում են տվյալ համայնքները, մոտակա համայնքներն ու բնակավայրերը: Ուսումնական հաստատությունները հայտերը ներկայացնում են որպես համակարգող սահմանված համայնքապետարան կամ վարչական շրջանի աշխատակազմ:

## V.ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

11. Ռազմամարզական խաղերի ծրագրում ներառված են հետևյալ վարժաձևերը՝

***1) Նռնակի նետում հեռավորության վրա («Ֆ-1» ուսումնական),***

***2) 8 կգ-անոց ուսապարկով փոխանցավազք (4 x 50 մ),***

***3) Ձգումներ պտտաձողից,***

***4) Վազք (1000մ),***

***5) Հրաձգություն,*** *(ինքնաձիգով կամ օդամղիչ հրացանով),*

***6) Ինքնաձիգի ոչ լրիվ քանդում-հավաքում:***

## VI. ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

12. Ռազմամարզական խաղերի առանձին մարզաձևերում հաղթող է ճանաչվում տվյալ մարզաձևում առավել բարձր արդյունք ցույց տված մարզիկը:

13. Ընդհանուր թիմային առաջնության հաշվարկը բոլոր փուլերում որոշվում է առանձին մարզաձևերում թիմի 9 անդամների կողմից ձեռք բերված միավորների առավելագույն գումարով, մասնակցության կարգը բոլոր փուլերում համաձայն՝ հավելված №2-ի, միավորների հաշվարկի աղյուսակ՝ հավելված № 3 :

14. Մեկից ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում առավելությունը տրվում է առանձին մարզաձևերում առավել շատ 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ տեղեր գրաված մարզիկ ունեցող թիմին:

15. Խաղերի 4-րդ՝ եզրափակիչ փուլում կազմակերպիչների կողմից ծրագրում կարող են կատարվել փոփոխություններ:

## VII. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

16. Ռազմամարզական խաղերի 1-ին՝ ներդպրոցական փուլում լավագույն արդյունք ցուցաբերած սովորողները պարգևատրվում են դպրոցի տնօրենության կողմից:

17. Ռազմամարզական խաղերի 2-րդ (համայնքային և Երևանի վարչական շրջանների) և 3-րդ (Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի) փուլերի 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված դպրոցներին տրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրեր:

18. Խաղերի 4-րդ փուլում 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված դպրոցները պարգևատրվում են հավաստագրերով, շնորհակալագրերով, գավաթներով, դրամական մրցանակներով, իսկ 4-11-րդ տեղերը գրաված դպրոցներին տրվում է շնորհակալագիր և մարզագույք:

19. Խաղերի առանձին 5 մարզաձևերում հաղթողները պարգևատրվում են մրցանակներով, համապատասխան կարգի հավաստագրերով, իսկ փոխանցումավազքի հաղթող թիմը՝ գավաթով և համապատասխան կարգի հավաստագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և զինվորական կոմիսարիատի համապատասխան կարգի հավաստագրերով:

## VIII. ԾԱԽՍԵՐԸ

20. Միջոցառման 2-րդ և 3-րդ փուլերի Երևան քաղաքի մրցավարների (սննդի ընդունման օրական վճարի չափ) ծախսերը կատարում են Երևանի վարչական շրջանների աշխատակազմերը, մասնակից դպրոցների գործուղման հետ կապված ծախսերը հոգում են գործուղող կազմակերպությունները, իսկ մրցանակային տեղեր գրաված դպրոցներին տրվող հավաստագրերը տրամադրում է Նախարարությունը:

21. Միջոցառման 2-րդ և 3-րդ՝ Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքային և մարզային փուլերի մրցավարների (սննդի ընդունման օրական վճարի չափ) ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին, մասնակից դպրոցների գործուղման հետ կապված ծախսերը հոգում են գործուղող կազմակերպությունները, իսկ մրցանակային տեղեր գրաված դպրոցներին տրվող հավաստագրերը տրամադրում է Նախարարությունը:

22. 4-րդ՝ եզրափակիչ փուլի կազմակերպման և անցկացման հետ կապված ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին, այդ թվում՝ մրցումների ծրագրով նախատեսված մարզագույք, համապատասխան տարածքների, ձայնային տեխնիկայի ապահովում, գովազդային նյութեր, ֆոտո և տեսանկարահանում, հաղորդավարի ծառայություն, շնորհակալագրեր, գրենական պիտույքներ, մրցավարների և բժշկի սնունդ (սննդի ընդունման օրական վճարի չափ), մրցավարների մարզաշապիկ և գլխարկ, մասնակից բոլոր սովորողներին նվերներ (մարզաշապիկ), մասնակից թիմերի գիշերակաց և սննդի ընդունման օրական վճարի չափ, տրանսպորտի ապահովում, անհատական 5 մարզաձևերում 1-ին տեղերը գրաված մարզիկներին՝ հավաստագիր և մրցանակ, փոխանցավազքի հաղթող թիմին՝ գավաթ, մրցանակային տեղեր գրաված թիմերի պարգևատրում. 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր գրաված դպրոցների թիմերը պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, մեդալներով, մարզահագուստ և դրամական պարգևներով՝ դպրոցի համար մարզական գույք ձեռք բերելու նպատակով.

1-ին տեղ՝ 450 000 ՀՀ դրամ,

2-րդ տեղ՝ 350 000 ՀՀ դրամ,

3-րդ տեղ՝ 250,000 ՀՀ դրամ,

23. 4-րդ՝ եզրափակիչ փուլում 4-11-րդ տեղերը գրաված դպրոցներին տրվում է շնորհակալագիր և մարզագույք:

## IX. ՀԱՅՏԵՐԸ

24. Միջոցառման 2-րդ փուլի մասնակցության հայտերը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության համայնքապետարանների և Երևան քաղաքի վարչական շրջանների համապատասխան բաժիններ մինչև սեպտեմբերի 19-ը:

25. Միջոցառման 3-րդ փուլի մասնակցության հայտերը ներկայացվում են Երևանի քաղաքապետարան և Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմեր մինչև սեպտեմբերի 30-ը:

26. Համայնքային փուլի անցկացման հաշվետվությունները ներկայացվում են համապատասխանաբար Երևանի քաղաքապետարան և Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմեր:

27. Երևանի քաղաքային և մարզային փուլերի ավարտից հետո՝ 5-օրյա ժամկետում, հաշվետվությունները ներկայացվում են Նախարարություն՝ նշելով

միջոցառման համապատասխան փուլերին մասնակցած հանրակրթական դպրոցների և աշակերտների թիվը:

28. Եզրափակիչ փուլի մասնակցության նախնական հայտը Նախարարություն է ներկայացվում մինչև հոկտեմբերի 13-ը: Նշված ժամկետից ուշ ներկայացված հայտերը չեն ընդունվում:

29. Եզրափակիչ փուլին հարգելի պատճառներով մասնակցել չկարողացող դպրոցի փոխարեն պետք է մասնակցի հաջորդ տեղը գրաված դպրոցը:

30. Եզրափակիչ փուլի մասնակցության անվանական հայտերը մրցավարական հանձնաժողովին են ներկայացվում մրցումների օրը՝ հաստատված դպրոցի տնօրենի և բժշկի (կամ ուսումնական հաստատության բուժքրոջ) կողմից: Հայտին կից ներկայացվում է՝

1) անձնագիր կամ ծննդյան վկայական (16 տարին չլրացած մասնակիցների համար),

2) տեղեկանք դպրոցից (մասնակցի լուսանկարով և դպրոցի կնիքով),

3) հայտում անհրաժեշտ է նշել Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում (emis.am) աշակերտի էլեկտրոնային համարը:

*Հավելված № 2*
*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի*
*2025 թվականի ---------------------------- --------- -ի*
*№ ---------------- -Ա/2 հրամանի*

# ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

## I. ՄՐՑԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցավարությունն իրականացնում է մրցավարական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով): Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են մրցումների գլխավոր մրցավարը, գլխավոր քարտուղարը, առանձին մարզաձևերի մրցավարական խմբերի ղեկավարները և մրցավարները: Մրցավարական Հանձնաժողովը կոլեգիալ կարգով քննարկում է ներկայացված բողոքները: Նրա որոշումները վերջնական են:

## II. ՎԱՐԺԱՁԵՎԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. **Ինքնաձիգի ոչ լրիվ քանդում-հավաքում:** Զենքը պետք է քանդել-հավաքել սեղանի կամ մաքուր սփռոցի վրա. մասերը ու մեխանիզմները դնել ըստ քանդելու հաջորդականության, դրանց հետ վարվել զգույշ, մի մասը մյուսի վրա չդնել և չկիրառել ավելորդ ուժ ու կտրուկ հարվածներ: Պատրաստ լինելուն պես մրցավարի «Մարշ» ազդանշանով մասնակիցը սկսում է ինքնաձիգի ոչ լրիվ քանդումը՝ մրցավարի ազդանշանից շուտ մեկնարկն սկսած մասնակիցն առաջին անգամ զգուշացվում է, երկրորդ անգամ հանվում է հետագա մրցապայքարից: Ինքնաձիգի ոչ լրիվ քանդումը ավարտելուն պես մասնակիցը ձեռքը հպում է սեղանին կամ ասում՝ «Ավարտ», որից անմիջապես հետո կանգնեցվում է ժամանակը: Մասնակիցը հեռանում է սեղանից մեկ քայլ՝ թույլ տալով մրցավարին ստուգել մասերը ու մեխանիզմները, համոզվելով, որ իրականացվել է ինքնաձիգի ոչ լրիվ քանդումը՝ մրցավարը տալիս է «Շարունակել» ազդանշանը, և մասնակիցը սկսում է ինքնաձիգի ոչ լրիվ հավաքումը: Ինքնաձիգի ոչ լրիվ հավաքումը ավարտելուն պես մասնակիցը ձեռքը հպում է սեղանին կամ կրկին ասում «Ավարտ», որից անմիջապես հետո կանգնեցվում է ընդանուր ժամանակը: Մասերի ու մեխանիզմների վայր ընկնելու ժամանակ մասնակիցը պետք է ինքնուրույն վերցնի և շարունակի ինքնաձիգի ոչ լրիվ քանդում-հավաքում՝ ըստ ներկայացված կարգի՝

**1) Ինքնաձիգի ոչ լրիվ քանդման կարգը՝**

ա. **անջատել պահեստատուփը**. ձախ ձեռքով ավտոմատը բռնելով կոթի վզիկից կամ ձողակալից՝ աջով բռնել պահեստատուփը, բութ մատով սեղմել մղլակը, պահեստատուփի ներքևի մասը տանել առաջ և հանել այն: Դրանից հետո ստուգել՝ արդյոք փամփշտանոցում փամփուշտ չկա: Ստուգելու համար փոխադրիչը իջեցնել ներքև, փականակի շրջանակի բռնակը քաշել հետ, ստուգել փամփշտանոցը, որից հետո բաց թողնել փականակի շրջանակի բռնակն ու հրահանը իջեցնել մարտական ոտքից,

բ. **հանել պահատուփը պիտույքներով**. աջ ձեռքի մատով կոթի բնիկի կափարիչը սեղմել այնպես, որ պահատուփը զսպանակի ազդեցությամբ դուրս գա բնիկից,

գ. **անջատել շամփուրը**. շամփուրի ծայրը ձգել այնպես, որ դրա գլխիկը դուրս գա նշանահատիկի հիմքի հենակից և քաշել-հանել բնիկից,

դ. **անջատել փողաբերանի արգելակ կոմպենսատորը**. սեղմելով սեվեռիչը պտտելով քանդել կոմպենսատորը ժամ սլաքին հակառակ,

ե. **անջատել փողատուփի կափարիչը.** ձախ ձեռքով բռնել կոթի վզիկը, նույն ձեռքի բութ մատով սեղմել հետադարձ մեխանիզմի ուղղորդիչ ձողիկի ելունը, աջ ձեռքով փողատուփի կափարիչը բարձրացնել վեր և անջատել այն,

զ. **անջատել հետադարձ մեխանիզմը**. ձախ ձեռքով բռնել ավտոմատի կոթի վզիկից, աջ ձեռքով առաջ տալ հետադարձ մեխանիզմի ուղղորդիչ ձողիկը, մինչև նրա կրնկի դուրս գալը՝ փողատուփի երկայնական առանցքից, ուղղորդիչ ձողիկի վեջնամասը բարձրացնել և հետադարձ մեխանիզմը հանել փականակի շրջանակի անցքից,

է. **անջատել փականակի շրջանակը փականակով**. շարունակելով բռնած պահել ավտոմատը ձախ ձեռքով՝ աջով փականակի շրջանակը հետ տանել մինչև վերջ, փականակի հետ բարձրացնել և անջատել փողատուփից,

ը. **անջատել փականակը փականակի շրջանակից**. ձախ ձեռքով բռնել փականակի շրջանակը՝ փականակը դեպի վեր, աջով փականակը տանել հետ, այն շրջել այնպես, որ փականակի տանող ելունը դուրս գա շրջանակի ձևավոր կտրվածքից և առաջ տանելով՝ հանել:

թ. **անջատել գազախողովակը փողի պահպանակով հանդերձ**. ավտոմատը բռնել ձախ ձեռքով, աջով պիտույքների պահատուփը իր ուղղանկյուն անցքով հագցնել գազախողովակի փակիչի ելունի վրա, փակիչին տալ ուղղահայաց դիրք և հանել գազախողովակը գազախցի ենթախողովակից:

**2) Ինքնաձիգի հավաքումը ոչ լրիվ քանդելուց հետո՝**

ա. **փականակը միացնել փականակի շրջանակին**. փականակի շրջանակը բռնել ձախ ձեռքով, իսկ փականակը աջով, փականակը գլանային մասով դնել շրջանակի բացվածքի մեջ և փականակը շրջել այնպես, որ նրա տանող ելունը մտնի փականակի շրջանակի ձևավոր կտրվածքի մեջ և փականակը տանել առաջ,

բ. **փականակի շրջանակը փականակով միացնել փողատուփին**. փականակի շրջանակը աջ ձեռքով բռնել այնպես, որ փականակը բութ մատով սեղմված լինի առջևի

դիրքում, ձախ ձեռքով բռնել կոթի վզիկը, աջով գազամխոցը մտցնել նշանոցատուփի խոռոչի մեջ և փակաղակի շրջանակը առաջ տանել այնքան, մինչև փողատուփի ծալվածքները մտնեն փակաղակի շրջանակի ակոսների մեջ, ոչ մեծ ճիգով այն սեղմել փողատուփին և տանել առաջ,

գ. **միացնել հետադարձ մեխանիզմը**. աջ ձեռքով հետադարձ մեխանիզմը մտցնել փակաղակի շրջանակի բացվածքի մեջ, սեղմել հետադարձ զսպանակը առաջ մղել ուղղորդիչ ձողիկը, և մի փոքր իջեցնելով՝ նրա կրունկը մտցնել փողատուփի երկայնակի ակոսի մեջ,

դ. **միացնել փողատուփի կափարիչը**. փողատուփը առջևի մասով դնել նշանոցատուփի վրայի կիսակլոր բացվածքի մեջ, կափարիչի հետևի մասը աջ ձեռքի ափով սեղմել առաջ և ներքև այնպես, որ հետադարձի մեխանիզմի ուղղորդիչ ձողիկի ելունը մտնի փողատուփի կափարիչի անցքի մեջ,

ե. **հրահանն իջեցնել մարտական ուռքից և դնել ապահովիչին**. սեղմել ձգանը և փոխադրիչը մինչև վերջ բարձրացնել վերև,

զ. **ժամ սլաքի ողղությամբ պտտելով ձգել փոխաբերանի արգելակ կոմպեսատորը**. մինչև առաջին կտոցը,

է. **միացնել շամփուրը**,

ը. **պահատուփը դնել կոթի բնիկի մեջ**. տակի մասով պահատուփը մտցնել կոթի բնիկի մեջ այնպես, որ բնիկը փակվի կափարիչով,

թ. **պահեստատուփը միացնել ավտոմատին**. ձախ ձեռքով բռնել կոթի վզիկից կամ փողակալից, աջով փողատուփի պատուհանի մեջ մտցնել պահեստատուփի կառչանը և պահեստատուփը շրջել այնպես, որ մղլակն ընկնի պահեստատուփի հենակային ելուստից դուրս:

2. **Հրաձգություն ինքնաձիգից** *(կամ օդամղիչ հրացանով 10 մետր հեռավորությունից)***:** Վարժանքի նույն օրը մասնակիցներին տրամադրվում է նորմալ մարտի և նշանազարկի բերված ինքնաձիգ: Մրցումները լավագույնս կազմակերպելու համար ցանկալի է մրցման վայրն ապահովել դիտասարքով, նշանակետի ուղղման սարքով, կրակի բացման բնագիծը կահավորել միմյանցից առնվազն 3մ հեռավորության վրա՝ բաժանարար պատերով, ծածկով և պառկած վարժության համար մարզական ներքնակներով (մատ): Հրաձգության ժամանակ թիմակցի թիրախը միտումնավոր կամ պատահական խոցելու դեպքում տվյալ մարզիկը որակազրկվում է (դուրս է հանվում պայքարից), իսկ մյուս մասնակցից հանվում է ամենաբարձր միավորը:

Տրվում է 8 հաշվարկային կրակոցի հնարավորություն, իսկ հաշվարկվում է 5 լավագույն միավորները: Յուրաքանչյուր մասնակցին իր հատկացված կրակային դիրքում տրվում է փամփուշտներով լիցքավորված պահեստատուփ, մրցավարը նրան հայտնում է այն թիրախի համարը, որին պետք է կրակի մարզիկը: Վերջինս կրակում է պատրաստ լինելուն պես՝ միայն մրցավարի ազդանշանից հետո: Մրցավարի ազդանշանից շուտ կրակոց կատարած մասնակիցն անմիջապես հեռացվում է հետագա մրցապայքարից:

Մասնակիցը զենքով բոլոր գործողությունները կատարում է ինքնուրույն: Անսարքությունների վերացման համար, մրցավարի թույլտվությամբ, նա կարող է օգտվել ինքնաձիգի վարպետի կամ մրցավարի օգնությունից:

Վարժանքը կատարվում է մենահատ կրակոցով, 100մ հեռավորությունից, N 4 կրծքային թիրախի վրա, պառկած դրությունից: Եթե մասնակիցը մենահատ կրակոցի փոխարեն կրակել է կրակահերթով, կրակը նույնպես համարվում է կատարված:

3. **Ձգումներ պտտաձողի վրա:** Կատարվում է կախված վիճակում (ֆիքսվում է 1-2 վայրկյան), բռնվածքը՝ վերևից: Ձգվելուց ծնոտը պետք է բարձրացնել պտտաձողից բարձր: Ձգումը հաշվվում է, եթե կատարվել է ինքնուրույն, ուղղված ոտքերով, առանց թափային շարժումների, իսկ իջնելիս ձեռքերը լրիվ ուղղված են (ֆիքսվում է 1-2 վայրկյան): Մրցավարի հաշվից հետո նոր մասնակիցը իրավունք ունի կատարել հաջորդ ձգումը: Չի թույլատրվում ճոճումը դադարեցնելու նպատակով օգնություն ցուցաբերել:

4. **Նռնակի նետում հեռավորության վրա:** Նետումը կատարվում է ուսումնական «Ֆ-1» նռնակով (600գ, առանց լծակի): Նռնակը մասնակցին է տրվում նետման վայրում, մրցավարական հանձնաժողովի կողմից: Նետումը կատարվում է 4մ երկարությամբ և 7սմ լայնությամբ գծից, 10մ լայնությամբ միջանցքում: Նետումը համարվում է կատարված գլխավոր մրցավարի «Հաշվել» հրահանգից հետո, որը նա տալիս է, եթե նռնակն ընկել է միջանցքի սահմաններում, մասնակիցը նետելիս չի խախտել նետման կանոնները և նետումից հետո ընդունել է կայուն դիրք: Մրցավարը «Հաշվել» հրահանգը տալիս միաժամանակ բարձրացնում է դրոշակը, ինչը նետման հեռավորությունը չափող մրցավարներին իրավունք է տալիս արձանագրել նետման արդյունքը:

Մասնակցի կողմից նետման կանոնները խախտելիս մրցավարը «Չհաշվել» հրահանգ է տալիս՝ միաժամանակ թափահարելով ներքև իջեցված դրոշակը:

Նետումը չի արձանագրվում, եթե մասնակիցը.

1) նետման ժամանակ կամ դրանից հետո մարմնի որևէ մասով հատել է նշագիծը,
2) կանգնել կամ դիպչել է նետման գծին,
3) նռնակը բաց է թողել ձեռքից և այն անցել է նետման գիծը (թափավազքի վազքուղում վայր ընկած նռնակը սխալ չի համարվում),
4) նետումից հետո, մինչև «Հաշվել» հրահանգը, անցել է նետման գիծը:

Նետումը չի արձանագրվում նաև, եթե նռնակն ընկել է միջանցքի սահմաններից դուրս:

Նռնակի թողած հետքի մեկնարկին ամենամոտ սահմանին խրվում է համապատաս-խան համարի սեպը: Չափվում և արձանագրության մեջ նշվում է մասնակցի երկու նետում-ներից միայն լավագույնը: Չափումը կատարվում է մետրով, միջանցքում գծված ամենամոտ չափագծից: Արդյունքը չափվում է 1 սմ-ի ճշտությամբ:

5. **Վազք՝ 1000մ:** Մեկնարկը՝ կանգնած վիճակից: Անցկացվում է մարզադաշտի վազքուղու կամ այլ հարթ՝ վազքի համար հարմարեցված տարածության վրա: Մրցավա-րի ազդանշանից շուտ մեկնարկ սկսած մասնակիցն առաջին անգամ զգուշացվում է, երկրորդ անգամ հանվում է հետագա մրցապայքարից:

6. **Բոլոր մրցաձևերում** տեղերը որոշվում են լավագույն արդյունքով: Հավասար միավորների դեպքում մասնակիցներին տրվում է նույն տեղը, իսկ հաջորդ տեղը բաց է թողնվում:

7. ***8 կգ-անոց ուսապարկով փոխանցավազք (4 x 50 մ):*** Փոխանցավազքը անցկացվում է աթլետիկայի կանոնակարգի համաձայն: Մեկնարկը տրվում է մարզիկի կանգնած դրությունից՝ ուսապարկը մեջքին կամ գրկած: Յուրաքանչյուր թիմից մասնակցում է 8 մարզիկ: Հրահանգի համաձայն 1-ին համարի մասնակիցը՝ ուսապարկը մեջքին կամ ձեռքին, վազքով անցնում է տարածքը և էստաֆետը հանձնում հաջորդ համարի մասնակցին: 2-րդ համարի մասնակիցը արագորեն վերցնում է ուսապարկը (ազատ ոճի բռնվածք), անցնում է տարածքը և էստաֆետը հանձնում հաջորդ համարի մասնակցին: 3-րդ համարի մասնակիցը ուսապարկով վազքով անցնում է տարածքը և էստաֆետը հանձնում բժշկական պատգարակով կանգնած մարզիկներին (2 մարզիկ առջևից, 2-ը՝ հետևից բռնած, իսկ մեկ «վիրավոր» մարզիկը՝ պատգարակի վրա պառկած), և մարզիկները արագ հատում են վերջնագիծը: Հաղթող է ճանաչվում այն թիմը, որը բոլորից արագ է անցել տարածքը:

## III. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՈՎ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

8. Անհատական հաշվարկը կատարվում է յուրաքանչյուր մասնակցի զբաղեցրած տեղերի նվազագույն հանրագումարով:

9. Հավասար միավորների դեպքում առավելությունը տրվում է առավել շատ առաջին տեղեր գրաված մարզիկին, հավասարության դեպքում՝ երկրորդ, ապա՝ երրորդ տեղերը:

10. Եթե վերոհիշյալ պայմանները նույնպես հավասար են, առավելությունը տրվում է հաջորդաբար՝ 1000մ վազքից, ձգումներից, ապա՝ նռնակի նետում վարժությունից ավելի բարձր տեղ գրաված մարզիկին:

## IV. ԹԻՄԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿՈՎ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

11. Ընդհանուր թիմային հաշվարկը կատարվում է՝ ըստ յուրաքանչյուր մասնակցի զբաղեցրած ընդհանուր տեղերի առավելագույն հանրագումարով:

12. Հավասար միավորների դեպքում առավելությունը տրվում է առավել շատ առաջին տեղեր գրաված թիմին, հավասարության դեպքում՝ երկրորդ, ապա՝ երրորդ

տեղերը: Եթե վերոհիշյալ պայմանները նույնպես հավասար են, առավելությունը տրվում է ուսապարկով փոխանցավազք վարժությունում ավելի բարձր տեղ գրաված թիմին:

13. Եթե վերոհիշյալ պայմանները նույնպես հավասար են, առավելությունը տրվում է հաջորդաբար՝ 1000մ վազքից, ձգումներից, ապա՝ նռնակի նետում վարժությունից ավելի բարձր տեղեր գրաված թիմին:

## V. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

14. Թիմերի ներկայացուցիչները մրցման արդյունքներն իրավունք ունեն գրավոր բողոքարկել տվյալ վարժաձևի ավարտից հետո մեկ ժամվա ընթացքում:

*Հավելված № 3*
*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի*
*2025 թվականի --------------------------- -------- -ի*
*№ --------------- -Ա/2 հրամանի*

# ԱՂՅՈՒՍԱԿ
# ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿԻ

| Միավորը *(անհատական)* | ՎԱՐԺԱԶԵՎԵՐԸ | | | | | | Միավորը *(թիմային)* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Վազք-1000 մ | Նռնակի նետում հեռավորության վրա | Ձգումներ պտտաձողի վրա | Հրաձգություն (5 կրակոց) | Ինքնաձիգի ոչ լրիվ քանդում և հավաքում | Փոխանցավազք (50 մ x 4) ուսապարկով | |
| | Արդյունքը | Արդյունքը | Արդյունքը | Արդյունքը | Արդյունքը | **Գ Տ** | |
| **100** | 2.50.0 | 65 | 40 | 50 | 24.00 | **I** | **100** |
| **90** | 2.51.0 | 64 | 39 | 49 | 24.15 | **II** | **90** |
| **80** | 2.52.0 | 63 | 38 | 48 | 24.30 | **III** | **80** |
| **75** | 2.53.0 | 62 | 37 | - | 24.45 | **IV** | **75** |
| **70** | 2.54.0 | 61 | 36 | 47 | 25.00 | **V** | **70** |
| **65** | 2.55.0 | 60 | 35 | - | 25.15 | **VI** | **65** |
| **60** | 2.56.0 | 59 | 33 | 46 | 25.30 | **VII** | **60** |
| **55** | 2.57.0 | 58 | 32 | - | 25.45 | **VIII** | **55** |
| **50** | 2.58.0 | 57 | 31 | 45 | 26.00 | **IX** | **50** |
| **45** | 2.59.0 | 56 | 30 | - | 26.30 | **X** | **45** |
| **44** | 3.00.0 | 55 | 29 | 44 | 27.00 | XI | **40** |
| **43** | 3.01.0 | 54 | 28 | - | 27.30 | | |
| **42** | 3.02.0 | 53 | 27 | 43 | 28.00 | | |
| **41** | 3.03.0 | 52 | 26 | - | 28.30 | | |
| **40** | 3.04.0 | 51 | 25 | 42 | 29.00 | | |
| **39** | 3.05.0 | 50 | 24 | - | 29.30 | | |
| **38** | 3.06.0 | 49 | 23 | 41 | 30.00 | | |
| **37** | 3.07.0 | 48 | 22 | - | 30.30 | | |
| **36** | 3.08.0 | 47 | 21 | 40 | 31.00 | | |
| **35** | 3.09.0 | 46 | 20 | - | 31.30 | | |
| **34** | 3.10.0 | 45 | 19 | 39 | 32.00 | | |
| **33** | 3.11.0 | 44 | 18 | - | 32.30 | | |
| **32** | 3.12.0 | 43 | 17 | 38 | 33.00 | | |
| **31** | 3.13.0 | 42 | 16 | - | 33.30 | | |
| **30** | 3.14.0 | 41 | - | 37 | 34.00 | | |
| **29** | 3.15.0 | 40 | 15 | - | 34.30 | | |
| **28** | 3.16.0 | 39 | - | 36 | 35.00 | | |
| **27** | 3.17.0 | 38 | 14 | 35 | 35.30 | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **26** | 3.18.0 | 37 | - | 34 | 36.00 | | |
| **25** | 3.19.0 | 36 | 13 | 33 | 36.30 | | |
| **24** | 3.20.0 | 35 | - | 32 | 37.00 | | |
| **23** | 3.21.0 | 34 | 12 | 31 | 38.00 | | |
| **22** | 3.22.0 | 33 | - | 30 | 39.00 | | |
| **21** | 3.23.0 | 32 | 11 | 29 | 40.00 | | |
| **20** | 3.24.0 | 31 | - | 28 | 41.00 | | |
| **19** | 3.25.0 | 30 | 10 | 27 | 42.00 | | |
| **18** | 3.27.0 | 29 | - | 26 | 43.00 | | |
| **17** | 3.29.0 | 28 | 9 | 25 | 44.00 | | |
| **16** | 3.31.0 | 27 | - | 24 | 45.00 | | |
| **15** | 3.33.0 | 26 | 8 | 23 | 46.00 | | |
| **14** | 3.35.0 | 25 | - | 22 | 47.00 | | |
| **13** | 3.37.0 | 23 | 7 | 21 | 48.00 | | |
| **12** | 3.46.0 | 22 | - | 20 | 49.00 | | |
| **11** | 3.48.0 | 21 | 6 | 19 | 50.00 | | |
| **10** | 3.50.0 | 20 | - | 18 | 51.00 | | |
| **9** | 3.52.0 | 19 | 5 | 17 | 52.00 | | |
| **8** | 3.54.0 | 17 | - | 16 | 53.00 | | |
| **7** | 3.56.0 | 15 | 4 | 15 | 54.00 | | |
| **6** | 3.58.0 | - | - | 14 | 55.00 | | |
| **5** | 4.00.0 | 14 | 3 | 13 | 56.00 | | |
| **4** | 4.06.0 | - | - | 12 | 57.00 | | |
| **3** | 4.10.0 | 13 | 2 | 11 | 58.00 | | |
| **2** | 4.20.0 | - | - | 10 | 59.00 | | |
| **1** | Եզրագիծը հատած մարզիկը ստանում է նվազագույնը 1 միավոր | 12 | 1 | 6 | 60.00 | | |

*Հավելված № 2*
*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի*

*2025 թվականի _____________ -ի*

*№ ______________ -Ա/2 հրամանի*

# <u>Հ Ա Յ Տ</u>

## 2026 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ» ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

**ՀՀ _____________մարզի «_________________________________» դպրոցի թիմի**

**---- --------------2026 թ.**

| | Աշակերտի ազգանունը, անունը, հայրանունը | դասարան | ծննդյան օր, ամիս, տարեթիվ | անձնագրի կամ ծննդյան վկայականի համարը | բնակության հասցե |
|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | |
| 2 | | | | | |
| 3 | | | | | |
| 4 | | | | | |
| 5 | | | | | |
| 6 | | | | | |
| 7 | | | | | |
| 8 | | | | | |
| 9 | | | | | |
| | **Թիմի մարզիչ-ներկայացուցչի անունը, ազգանունը** | | | | |
| 1 | | | | | |

* Հայտին կից ներկայացվում են՝
1) աշակերտների անձնագրերի կամ ծննդյան վկայականների լուսապատճենները,
2) տեղեկանք դպրոցից՝ լուսանկարով:

**ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝** / / Կ.Տ

**ՄԱՐԶԻՉ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝** / /

**ԲԺԻՇԿ՝** / / Կ.Տ